



ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է՝ ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐԻ

Մշակի տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն
և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝
6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի
ամսականը 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղրամյան և Բարձրակապ փողոցն. անկիւն):
Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Յայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Կուր որսի վրա. — ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գե-
ղեցիկ օրինակ. Նամակ Բաղրամյան. Նամակ Կի-
մից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. —
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գեղեցիկ երգեր. Ներ-
սփայնիկ պատմություն. Նամակ Ամերիկայից. Նա-
մակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ԽԱՌԻՆ
ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կղերք առաջ
և այլմ:

ԿՈՒՆՈՐՈՒՄ ՎՐԱ

Ներկա տարի առաջ տեղի ունեցած յայտ-
նի դէպքերից յետոյ քառասուն հարգող որ-
բեր միայն երկրի տակ, անտէր ու ան-
օդական: Մարդասիրութիւնն շտապեց
զոնէ այդ մանուկ բազմութիւնն ազատել
մահից: Արեւմտեան երկրներում գումար-
ներ հաւաքեցան, և հաւաքողները, որ-
քան էլ այդ զարմանալի լինի, միմիայն հո-
գեւորականներն էին: Մի հայր Շարման,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՂԵՐԸ ԱՌԱՋ ԵՒ ԱՅԺՄ

(Նամակ Խմբագրութեան)

III

Մենք չենք ուրանում, որ ռուսահայերին
կեանքում, Մակար կաթողիկոսի օրով, նկատե-
լի ոչ մտադառն մի արեւմտական հոսանք էլ-
միաձուլում. կաթողիկոսի շուրջ խմբված մի քա-
նի «ուսեաններ» Օրմանեանի օրհնութեամբ ձեռ-
նարկեցին պատրաստել մեր ժողովրդական ե-
կեղեցու համար մի նոր պատուաստ. կղերա-
կան գերիշխանութիւն քարոզող նոր սերունդ:
Մեր բոլոր եկեղեցական գործերում այդ օտա-
րամուտ պատուաստը չուտով մտքեց այնպիսի
խառնաշփոթութիւն, որ Թիւրքիան անգամ կա-
րող էր նախանձել: Խրախուսվելով այդ նոր
սկզբունքից, այն տղէտները՝ որոնք մինչև այդ
ժամանակ քաշվելով էին մութ գործեր կատա-
րում, սկսեցին այնուհետև իրանց զազիր ա-
րարքները «ուսեաններից» սերտած «կղերի գե-
րիշխանութեան» սկզբունքով ծածկել: Այդ ըս-
կազմում ասում էր թէ բաւական է, որ մէկը
գլխին վեղար ունենայ, ուսերին փարաջա, որ
լիազօրութիւն ստանայ առանց ժողովրդի կամ-
քին նայելու, առանց արդարութեան ձայնը
լսելու, ինքնիշխան կարողութիւն դպրոցական, ե-
կեղեցական, քահանայական, կալուածական, ա-
մանական և այլ խնդիրները, ըստ իր անըն-
դունդութեան հայեցողութեան: Անս այն կղերա-
կանութիւնը, որը պատուաստվեց և շատ չարիք-
ների պատճառ եղաւ, գլխաւորապէս մասնաշի-
հակապետ մասի վարանող, անհաստատ ընդ-
դիմադրութեան շնորհիւ: Թիւրքահայաց կեան-
քում, ուր ժողովուրդն է ընտրում պատրիարքին,
առաջնորդներին և յաջորդներին, և ինքը ժողո-
վուրդն է հրաժարեցնում, կղերն անկարող է վեր-
սիշած ուղղութիւնը արտայայտել, այդ պատճա-

մի դժուար կէսփուշ, մի Ալէքսանդր Բար-
դաբեյի, նկարագրեցին երկրի թշուառ դը-
րութիւնը և գլխութիւն հայացեցին: Գու-
մարները անցան միայն հոգեւորականների
ձեռքը. թէև եւրօպայում և Ամերիկայում
շատ կան բարեգործական և մարդասիրա-
կան հաստատութիւններ, որոնք կապ չու-
նեն հոգեւորականութեան հետ, բայց դը-
րանցից ոչ մէկը անմիջական օգնութեան
չէր հասաւ. բացառութիւն կազմողը միայն
ամերիկական Կարմիր խաչն էր, որ ժամա-
նակաւոր օգնութիւն հասցրեց միայն կո-
տորածների ժամանակ: Իսկ որբերի համար
հարկաւոր էր աւելի միայն և կազմակեր-
պութիւն և այդ հոգսը միայն միմիայն
զանազան ազգութիւնների հոգեւորականու-
թեան: Որբանոցների բացումը սկսվեց ան-
միջապէս կոտորածից յետոյ և մի քանի օ-
տարազգի հոգեւորականների կատարած
գործերը այդ տխուր և սարսափելի ժա-

նով էլ կղերականութեան մասին խօսել այն-
տեղի համար, նշանակում է ընդգծել մասնաշի-
հակապետ կիսմարդի Բայց դրա դէմ դար-
ձեալ լսվում է պ. Գ. Կ.-ի ձայնը:

«Վեղարը, ասում է յօդուածագիրը, չէ կարող
հրաժարել իր դասակարգային շահերից. իսկ
հակառակ պարագային դա կը լինէր երկրա-
գնդի երեսին չը տեսնված մի հրաշք: Այլ
խօսքերով և ուրիշ տեսակետից պարուն հաս-
տատում է նոյնը, ինչ որ մինչև այժմ էլ միաձու-
լայտի գործիչները, ինչ որ լսում է ինքը զա-
նազան Կղերաներից ու Կարապետներից: Սա-
կայն տեսնենք արեւօք այդ զարդարուն նախա-
դասութիւնը ակտիւս է, գուտ ճշմարտութիւն
է, թէ... սիրամարդի փետուրներով գեղեցկա-
ցած մի սղորմելի աղաւա:

Պարոն յօդուածագիրը ինչպէս երևում է
չփոխում է երկու տարբեր հակադրութիւններ.
պաշտօն կամ գործունէութիւն և շահաւորու-
թիւն կապված այդ պաշտօնի հետ: Պարզեց
այդ մի օրինակով, որը վերցնենք աշխարհական,
օրինակ, բժշկների դասակարգի նկատմամբ: Բը-
ժշկի գործն է, ուրեմն և պաշտօնը՝ բուժել հի-
ւանդներին, իսկ նրա դասակարգային շահերն
են՝ ունենալ շատ հիւանդներ (ուրեմն ցանկա-
նալ մարդկանց գոբախտութիւնը), ստանալ մեծ
վարձատրութիւն (ուրեմն աչք անկել մարդկանց
գրպանի վրա), դէմ լինել ձրի հիւանդանոցնե-
րին (ուրեմն չքաւորների մասին հոգ չը տա-
նել), պահանջել բժշկների համար դանդաղ
արտօնութիւն և այլն: Ինչպէս տեսնում ենք
բժշկի այդ դասակարգային շահերը՝ ուղղակի
հակառակ են հասարակականին. բայց կարգին,
ազնիւ բժշկը իրոյն է տալիս այդ բաներից:
Կարող է մի գեղեցիկ օր բժշկութիւնն ստանալ
այնպիսի ձև, որ ամեն մի մարդուն մատչելի կը
լինի ձրեաբար ամենալաւ բժշկութիւն, այն ժա-
մանակ անապիւր բժշկներն անգամ առիթ չեն
ունենալ դասակարգային շահեր ունենալ, ու-
րեմն կարող են դասակարգային շահերը հա-
մարեալ ոչնչանալ, թէև պաշտօնը, բուժելը կը
մնայ, քանի դեռ հիւանդանալ մարդկային բը-

մանակներում պէտք է համարել կատա-
րեալ հերոսութիւն:

Թիւրքիայի հայոց հոգեւորականութիւնն
էլ, թէև բաւական ուշ, ստիպված էր հի-
տեւել օտարների օրինակին: Ի՞նչն էր
դրոյում հայ կղերին դուրս գալ իր սովո-
րական անշարժութիւնից: Անշուշտ մեծ
մղում տուեց այդ գործին կրօնական հան-
գամանքը. սկզբում Կ. Պօլսում բարձրացաւ
փարիսեցիական աղաղակ այն մասին, որ
հայ որբերին ազատողներն ունեն աւելի
առաջաւոր մտադրութիւն, քան մարդը մար-
դասիրութիւն: Այն ժամանակից օտար որ-
բանոցները դարձել են հայ հոգեւորականու-
թեան աչքի փուշը և դեռ այս օրերս Վա-
սիսի մէջ երեւայ մի հայ եկեղեցականի յօ-
դուածը, որ ամեն կերպ աշխատում է ապա-
ցուցանել, թէ առանց օգնութեան մնացած
որբերը աւելի լաւ դրութեան մէջ են,
քան որբանոցներում խնամվողները: Մի
մնապարծութեամբ, որ յատուկ է միայն
կրօնաւորին, յօդուածագիրը վկայում է, որ
հայ երեսնաներն անգամ գիտեն, որ պիտի
լուսաւորական միան, ուստի և խուսա-
փում են օտար խնամակալութիւնից:

Որ հոգեւորական դասն ամեն տեղ որս է
որոնում, դա ոչ զարմանալի է, ոչ էլ ա-
ռաջին անգամն է հանդէս գալիս մարդ-
կութեան մէջ: Անկարելի է լինել հոգեւ-
րական և չը մտածել «հոգու փրկութեան»
մասին: Եթէ հայոց հոգեւորականութիւնն
այնքան պատրաստված, պարտաճանաչ լի-
նէր, որ բացառապէս իր ձեռքն առնէր
որբերի խնամակալութիւնը, ոչ որ ոչինչ
չէր ասի Նիժէ Կ. Պօլսի պատրիարքարա-
նում լինէր Ներսէսի նման մի մարդ, որ
1880 թվականի սովի ժամանակ կազմա-
կերպեց օգնութեան գործը և նոյն իսկ
Եւրօպայի վեհապետներից դրամական օ-

նութեան թող կողմերից մէկն է: Այս օրինակի
անաւորիցով կարելի է եզրակացնել, որ կարող
են վերանալ հոգեւորական պաշտօնի հետ կապ-
ված եղանակաբարդ շահերը, թէև հոգեւո-
րական կրօնը կը լինի, քանի որ մարդկային
մասնանքեր ունեն հաւատ: Վերցնենք օրինակ
մի առաջնորդ, որը աւելի միջոցներ ունի ար-
տայայտել եղանակաբարդ շահեր: Առաջնորդի
գործը, պաշտօնը՝ թեմ կառավարելու մէջ է
կայանում, ուրեմն պէտք է ունենալ նա վար-
չական ընդունակութիւն և յայտնի դարձանում
է ազնուութիւն: Արդ, կարող է նա, այդ վեղա-
րաւորը, կատարել ստանձնած պաշտօնը, «հրա-
ժարվելով դասակարգային շահերից» թէ ոչ:
Մեր հակառակորդի կարծիքով հրաշք կը լինէր,
եթէ նա հրաժարվէր իր դասակարգային շահե-
րից: Բայց որոնք են մեզմասին այդ շահերը,
որոնցից իր թէ առաջնորդը կարող չէ—հրա-
ժարվել, որչափ կարելի է շատ տղէտ բանաւ-
ներ ձեռնադրել, թեմի դպրոցները կամայական
կերպով ղեկավարել, վաճառատական կալուած-
ները անկօծաբար կառավարել, կաշառքով հառ-
չը հառը կարգադրել, ժողովրդի վրա անսահման
սիրելու լիազօրութիւն ունենալ, և այլն: Այդ
բոլոր ձգտումները հակահասարակական են և
դէմ ժողովրդի շահերին, ուրեմն և նրա «ծողո-
վրդական» եկեղեցուն, բայց այս քաջագործու-
թիւններից որն է ըզլսում ճշնեց վեղարքայի տա-
կից: Եթ որ դրանք ղեկավարներ են, իրաւագա-
նութիւններ, որոնք դէմ պէտք է մարտնչել ինքը
հասարակութիւնը, իսկ մեր կղերի գեղեցիկանա-
կան ձգտումները՝ ոչ անկախ պապի վրա են
հիմնված, ոչ էլ առանձին կղերական ղեկը
կուսակցութեան պաշտպանութիւնից կախված,
որովհետեւ ժողովուրդը de jure ում ուղեւայ
տիրացու կրնորի, ում ցանկանայ կը դարձնի
կաթողիկոս: Ուրեմն, ինչպէս ինքը հասարակու-
թիւնն է միջոցներ ձեռք առնում մի բժշկի
կամ այլ աշխարհական պաշտօնաւոր դասա-
կարգային շահերի հակահասարակական արտա-
յայտութիւնների դէմ, այնպէս էլ ինքը հասա-
րակութիւնը կարող է սահմանափակել վեղարի

ժանդակութիւն ստացաւ, մենք ուրախ կը
լինէինք, եթէ այդպիսի մարդն այս աղէտի
ժամանակ կարողանար որբանոցների ցանցով
պատել աւերակ երկրը: Բայց քանի որ
Թիւրքահայ հոգեւորականութիւնը միայն
«փափուներ համբուրել» գիտէ այն ժա-
մանակ, երբ նրա հօտը լաց է լինում մեր-
կութիւնից և քաղցից, մի՞թէ կարող է
լինել հարց այն մասին, թէ սովից ազատ-
վողը որ կրօնին կը պատկանէ: Որսը անե-
լու համար էլ կարկաւոր է ունենալ պատ-
րաստութիւն, խելք, ընդունակութիւն:
Դուք չունէք, ուրեմն պիտի լռէք: Աշխար-
հի մէջ այլ ևս չը կայ այն խաւարամտու-
թիւնը, որ ուրախանար տեսնելով, թէ ի՞նչ-
պէս անմեղ մանուկները բնաջինջ են լի-
նում, որովհետեւ հարկաւոր է, որ նրանք
այս կամ այն եկեղեցու զաւակ լինեն:
Պէտք է թողլ տալ, որ մարդը ապրէ իբրեւ
մարդ և ոչ թէ իբրեւ եկեղեցու անդամ:
Մի անգամ, երբ դուք կը հասկանաք այս
տարրական արդարութիւնը մարդու վե-
րաբերմամբ, դուք ինքներդ կը զգէք այն
կուսից, որ անում է որսի վրա: Երողու-
թեան առաջ պիտի պապանձվի ձեր լեզուն.
մարդուն մարդկութեան համար ապրեցնել
պէտք է. այդ դէպքում նա որս չէ, այլ
պարզապէս մարդ: Չարախնդրութիւնը,
ծաղրը, օգնողների իսկական նպատակը
մութ դիտաւորութիւններով լուսաբանելը
կը սաստկացնեն այն զգուանքը, որ պատ-
ճառում է ձեր կուրը որսի վրա:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՂԱՅԻՒՄ ՕՐԻՆԱԿ

Վերջին մեծ չրգէն Բագում Վիշաու ընկե-
րութեան նախաձեռնութեամբ, ղգբախտաբար, ա-

կամայականութիւնները: Ինչպէս բժշկութիւնը
չէ վնասվում, այլ աւելի եւս օգտվում է, երբ
սահմանափակվում են բժշկների դասակարգային
շահերը, նոյնպէս և, օրինակ, մի առաջնորդի
գործունէութիւնն աւելի արդիւնաւոր է դառ-
նում, երբ սահմանափակվում են նրա կամայակա-
նութիւններն ու անձնական շահերը: Բայց, ի
հարկէ, տուէք հնարաւորութիւն թէ՛ բժշկին, թէ՛
ինձնէրին, թէ՛ վեղարին՝ անխափան անել ինչ
որ ձեռնարկ է իւրաքանչիւր դասակարգին և
կը ստանաք մի կացութիւն, ուր մէկը միւսին
կուտի:

«Բայց ուր մնաց աստուածաբանութիւնը»,
հարցնելու է մեզանից պ. Գ. Կ., չէ որ վեղարը
չի կարող հրաժարվել աստուածաբանութիւնից
նոյնպէս, ինչպէս բժիշկը—բժշկութիւնից, ինձն-
էրը—ինձնէրութիւնից և այլն: Սրա դէմ ինչ
կասէք: Եթէ ձեր ասածը ճիշդ լինէր, այն ժա-
մանակ ոչ թէ Սահալները, Մերոպները, Ներ-
սէսները, Աշտարակեցիները, Վարձապետեանը, Ա-
լիշանը, Այալներեանը, Բաղրամյանը և այլն և
այլն պէտք է մեր հոգեւորականութեան պար-
ճանք լինէին, այլ այն նոր տիպի մեր աստուա-
ծաբան-վարդապետները, որոնց հուշակը այն-
քան տխուր է: Եթէ ձեր ասածը ճիշդ լինէր՝
լաւ քարոզիչներ չէին համարվելու մի Խորէն
Ստեփանէ կամ Խրիմեան, որոնք աստուածա-
բանութեան մէջ, ի պատիւ նրանց պէտք է
ասել, բոլորի են, այլ դանաղան աստուածա-
բան: Օրմանեանը և Կարապետ վարդապետները
Եթէ ձեր ասածը ճիշդ լինէր՝ ամեն մի կաթո-
ղիկոսից, պատրիարքից, առաջնորդից, յաջոր-
դից, և այլն նախ և առաջ աստուածաբա-
նութիւնը կը պահանջէր: Եթէ ձեր ասա-
ծը զուտ ճշմարտութիւն լինէր, այն ժա-
մանակ պէտք է ընդունէինք որ համայն ազգը
սխալվել է շատ այնպիսի արժանաւոր հոգե-
ւորականներին լաւ վեղարաւորների շար-
քում դասելով, որոնք երբեք աստուածաբա-
նութեամբ չեն պարագիւր երբեք չեն գործա-
դրել ձեր եղ լեզուական, ոչ այլ աստուածա-
բանութիւնը: Եթէ աստուածաբանութիւնը նոյն-

ուսանող մարդկային զոհերի չէր: Ինչպէս հազար-
դուս է մեր թղթակիցը, 10 բանտարան մեզան,
երեքը ծանր կամ թեթիւ կերպով վնասվեցան և
բժշկվում են: Ընկերութիւնն շտապեց հրապա-
րել յառաջիկայ կորուստների առիթով և
խոստացաւ ապահովել զոհերի ընտանիքներին
նրա թափած գումարները: Դա պատիւ է բերում
անդրադարձնել ընկերութեան և մի և նոյն ժամա-
նակ մի լաւ օրինակ է տալիս Բագուի տեղացի
կապիտալիստներին: Նախկին արդիւնաւոր-
ծութեան հետ միշտ կապված է բանտը դատա-
կարգի ապահովութեան հարցը: Համարեա ամեն
օր տեղի են ունենում դժբախտ դէպքեր, որոնք
բանտարան կամ մահ են պատճառում կամ աշխա-
տանքի անընդունակ անդամաւոր դարձնում:
Ամեն տեղ գործատէրերի համար բարոյական
պարտաւորութիւն պիտի դառնայ վարձատրել
բանտարան ամբողջ շրջանի համար, որ նա
կրում է գործի մէջ: Բայց բարոյական պարտա-
ւորութիւններ չեն հասկանում տղէտ, թերուս
տեղացիները, որոնք բանտարան վրա նայում են
իրեն գրաստի վրա, որոնք կարծում են թէ բան-
տարան, ստանալով վարձ իր թափած քրտինքի
համար, մի և նոյն ժամանակ ծախում է գոր-
ծատէրի իր անձը, իր ընտանիքը: Այդ անմիտ
հասկացողութեան արդիւնքն այն է, որ տեղա-
ցիները գործարանում վնասված բանտարաններ
կամ պէտք է լուս ու մուշ մնան, կամ թէ մի
վարձատրութիւն ստանալու համար տարիներով
մաշեն դատարանի չէմբը, մրցեն գործատէրով
հմուտ փաստաբանների հետ: Եւստի, հարստու-
թեան ետեղ ընկած ասիական բողոքովն չէ
հասկանում որ իրաւունք չունի իր բարոյութիւ-
նը ուրիշների թշուառութեան վրա հիմնել:

Մի միջավայրում, ուր թաղաւորում են այդ-
պիսի վայրերի հասկացողութիւններ, եւրոպական
կապիտալիստների օրինակը, պէտք է յուսա-
կունեայ բարեբար ազդեցութիւն: Արդիւնաբե-
րական աշխարհում, մասնաւոր մեղ մօտ, հար-
կաւոր է բարեբար մեղմացում, մարդասիրական
լայն հոսանք: Մենք գիտենք որ տեղացի կա-
պիտալիստները մեծ մասամբ գիշատիչ հակու-
նեքի դպրոցն են միայն անցել և եթէ այժմ կա-
րողանում են աշխուժեցումը առաջ տանել իրանց
գործերը եւրոպական մրցութեան հրապարա-
կում անգամ, դրա պատճառն այն է, որ նրանք
ամենայն ուշադրութեամբ հետևում են տեխնի-
կայի զարգացման և խելոյն իւրացնում են այն, ինչ
հնարում է նրանց քաղաքակրթի մրցակիցը:
Կարող է պատահի, որ այդ տեխնիկական փոխա-
նութիւնների հետ կամայականորէն ներս մտնէ
տեղացի բուրժուալի ստրկ մէջ և փորը ի շատ
մարդասիրական գգացումը դէպի այն աշխա-

քան անհրաժեշտ լինէր վերաբարձր համար, որ-
քան բժշկութիւնը՝ բժշկի, այն ժամանակ ոչ-
աստուածաբան հոգևորականները, օրինակ՝
Վարժապետեան, Ալիշան, Իվանիսեան և այլն,
պէտք է հաշվենք կղերի ամենավատ ներկայա-
ցուցիչներ, ինչպէս բժշկութիւնն չիմացող բժիշկը
այդ դասակարգի ամենավատ ներկայացուցիչն
է, մի գիւղական «ղապա» է և ոչ էսկոլայայ:
Բայց իրականում մէջ վեղարն առանց աստու-
ածաբանութեան էլ փառաւորապէս գործ է տես-
նում և ոչ ոք չէ հետաքրքրվում, թէ ինչո՞ւ ար-
ժանատի հոգևորականները աստուածաբանու-
թեան մէջ ձեռք բանալուց իրենց ղեկը չեն գնա-
ցել... Տէրութիւն իր ձեռքն է կատարում առանց
աստուածաբանութեան, քարոզչին առանց այդ
աստուածաբանութեան՝ աւելի կենդանի, սր-
առուռ և ժողովրդի ցաւերին մօտ լեզուով է
խօսում, առաջնորդը, պատրիարքը, կաթողիկո-
սին առանց նրա մասին մտածելու անգամ հիա-
նալի կերպով են իրենց գործերը կատարել:
Բայց ինչո՞ւ է այդպէս. ինչո՞ւ գիտութիւնը և
աստուածաբանութիւնը նոյն լոգիկական եղա-
կացութիւնների չեն հասցնում ձեռք. որովհետեւ
մէկից՝ գիտութիւնից միայն կարելի է այն կամ
այն մասնաւորական գործունէութեան համար
անհրաժեշտ հմտութիւնը ձեռք բերել, մինչդեռ
աստուածաբանութիւնը, եթէ կամիք, մետաֆի-
զիկական փրկութիւններ չեն, որից վերջ ի
վերջ մի հանձնարք Սպինոզայի է հաստատա-
պէս նոյնչափ բան կարող է իմանալ Աստու-
ծոյ ճշմարտութեան մասին, որքան և Վերաբարձր ան-
շուք աստուածաբանները...

Ինչպէս մեր կղերի, այնպէս և մեր վանքերի
տէրը ինքը ժողովուրդն է: Մեր վանքերն ի-
րանց ընդարձակ կալուածներով ու հարստու-
թիւններով ազգային սեփականութիւն են: Մեր
ժողովուրդը դարերի ընթացքում ամբարիշտ
է այնտեղ իր խնայողութիւնները, որոնք պէտք է
գործարկվեն նրա սե օրերում, որոնք պէտք է
ծառայեն ժողովրդի բարօրութեան համար և ոչ
փարաջանների զեղխութեան (տես «Մշակ» 1897
№ 92 «Ինչի համար են» մեր յօդուածը): Եթէ

տաւորը, որ քրտինք է թափում նրա համար,
ոսկի է դիզում, ինքը բաւականաչափ իր մի-
կտոր չոր հացով: Թող այդ հարուստները լա-
հասկանան, որ կապիտալը, վերջ ի վերջ, պիտի
հաշտվի այն մարդի հետ, թէ նրա իշխանութեան
տակ ապրող մարդ է, մարդկային իրաւունքնե-
րով և պահանջներով:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԹՅՈՒՆ

Յուլիսի 31-ին

Անա արդէն վեց օր է, ինչ Բագու քաղաքի
հորիզոնը ծածկված է թանձր ծուխի ամպերով:
Ծուխը ցերեկը այն աստիճան թանձր է, որ եր-
բեմն ծածկում է նոյն իսկ արեգակի ճառա-
գայթիկները, իսկ գիշերը՝ կրակի լուսինը ամբողջ
քաղաքը լուսաւորված է: Այրվում է Վիշապի
նաւթի ֆոնտանը՝ Բիրիէյաթի նաւթանցում:
Հորքը սկսվել է յունիսի 26-ի գիշերվայ 1 ժա-
մին, նաւթանցի չողի պատրաստելու բաժ-
նում գազերի պայթիւնից: Մահվան մի քանի
դէպքեր այնքան սաստիկ են ազդում բանտարան-
ների վրա, որ նրանք թողնելով հրդեհը, սկսում
են հեռու փախչել, որպէս զի իրանք էլ չեն
թաքնվում իրանց ընկերների վիճակին: Այդ հեռու
չողի պատրաստելու բաժնից՝ նաւթի ֆոնտան է
խփում, հարուստ կերակուր հրդեհի համար: Մի
քանի վայրկեանում, օդի մէջ գազերը վառվե-
լով՝ կրակը հասնում է ֆոնտանին ու այդ վեր-
ջինն էլ է վառվում: Այդ ժամանակ հասնում են
բանտարանի խմբի՝ կրակից դիմադրելու: Սա-
կայն ու չէ... անարկու կրակի առաջ անգոր
է գտնվում առայժմ մարդկային հնարամտութիւնը:
Կրակը սաստիկանում է և շուտով անցնում մօ-
տակալ վիշապերին ու նաւթի պահարանը: Մի
քաւորը ժամը ընթացքում կրակի ճարակ դար-
ձաւ ամբողջ հանքը: Բացի այդուհի ֆոնտանից,
սկսում է ֆոնտան խփել նաև մի ուրիշ հորից՝
որը նոյնպէս վառվում է: Այդպէս՝ երկու ֆոն-
տանները շարունակում են խփել և այրվել: 13
բանտարան այրուածքներ ունենալով իսկին և
եթ հրանդանց փոխադրվեցին, բայց չը նա-
յած այդ անմիջական հոգածութեան, այնու ա-
մենայն, նրանցից տաս հոգի արդէն մեռել
են. իսկ երեքը անցյալ դրութեան մէջ են: Թէ
ինչ գուժարի կը հասնեն վնասները, առ այժմ
գործում է որոնք: Մեր կարծիքով, միլիոն բու-
րուց պակաս հաշիւ չէ կարելի: Հորքն զեռ
շարունակվում է: Վիշապի Բագուի բաժանմուն-
քի կառավարիչ Շուստայի՝ մարդկային զոհերի
մասին հեռագրով հաղորդել Լոնդոն, ընկերու-
թեան կապիտալները՝ որից հետոյն Նաւթա-
կան պատասխանն է ստացվել. «Նաւթա-
կան

ժողովուրդը գիտակցօրէն չէ ըմբռնում իր ի-
րաւունքները՝ հասկացելէ նրան, բայց ոչ թէ ա-
ւելի ևս ազդուէրէ նրա միջքը: Ի հարկէ, շատ
և շատ ուրախ կը լինէր մեր կղերի մեծ մասը,
որ վեղարի հետ «մի կողմ նետուէր» և վանքերի
հարցը, որովհետեւ նա, այդ մասը, այնքան
գործնական խեղճ ունի, որ գիտէ թէ «մի
կողմ նետուէր» դեռ չէ նշանակում՝ «վերացնել»
մի դասակարգ և նրա հետ կապված բոլոր հաս-
տատութիւնները: Այդ անկեղծ համար ոչ
միայն Գ. Վ., այլ և տաւը Հերբերտներ միա-
ցած նոյնքան Սամսոնների հետ, առանց մաս-
նայի միահամուռ ցանկութեան, առանց ար-
տաքին նպատակով պայմանների, ոչինչ չեն կա-
րող անել, ուրեմն կղերը կը մնայ, կը մնան և
վանքերը, միայն թէ՛ թողված իրանց վիճակին,
իրանց սեփական կամքին: Ի՞նչ կուզէ գայլը՝
մոլը գիշեր և թմբած ճովերդակ: Ի՞նչ կուզէ
անարժան հոգևորականը՝ մի բան՝ հասարակու-
թիւնը չը խառնի նրա գործերում, մասնաւոր չը
մերկացնի նրա պահատութիւնները...

Բայց պ. Գ. Վ.-ն դարձեալ նոր «անհրաժեշտ»
ճշմարտութիւն է դնում մեր բոլորին առաջ,
համեմելով այդ ինքն ահ կենսական անա-
նարկներով... Նա ասում է՝ կղերը եթէ ու-
ղենայ է իսկական ծառայութիւն ցոյց տալ ժո-
ղովրդին, նա այդ չէ կարող անել, որովհետեւ ոչ
միայն Թուրքիայում, ուր եղել է պարսկի և շատ
բան տեսել, այլ և ամեն տեղ կան անյարգելի
խոչընդոտներ նրա առաջ, որոնք իբրեւ մտա-
բանում են աշխարհական «սոփիստներ» դի-
մաց: Եթէ, ասում է պարսկը, մեր սակաւթիւ
խոտիկներնայի մի մասը գլխին վեղար դնի,
միայն եկեղեցու հետ կապված դանադան ընտ-
րութիւններով հեղափոխ (ինչպէս այդ արաւ
1892 թ. Գրիգոր Արքեպիսկոպոսի համախոհնե-
րով)՝ ինչ կը մնայ տակին. դա նշանակում է
ուժեղը ջլատել: Կարծես ընտրութիւններն են
խանգարում այլ հասարակական գործերին նը-
ւերվելու, կարծես վեղարից կամ ցլիկից
է կախված է գիւղի թէ աշտուրիստ լինելը, կա-
րեւիստ թէ հասարակական գործիչ դառնալը:

իր խորին ցաւակցութիւնն է յայտնում հրդեհի
ժամանակ տեղի ունեցած զոհերի համար ու
խնդրում է շուտով հաղորդել մեռածներին և վը-
նասվածներին ընտանեկան դրութիւնը: «Թէպէտ
մենք անգոր ենք օգնել նրանց ընտանիքներին
բարոյական վշտին, բայց և այնպէս նրանց նու-
թական դրութիւնը կատարեալապէս ապահովված
կը լինի»: Անս մարդասիրութեան օրինակ, որին
հարկաւոր է հետևել: Արդե՞ք երկար պիտի ըս-
պանենք, որ մեր հայ դրամատէրներն ևս նոյն
կարեկցութեամբ վերաբերվին դէպի իրանց բան-
տարանի զոհերն ու վիճակը: Նրանք թէ այդ բարի
նախաձեռնող տողովին:

Ֆ. Մարդանեան

ՆԱՄԱԿ ԿԻՆԿԻՑ

Յուլիսի 28-ին

Կարմիր Խաչի ընկերութեան այստեղի ճիւղը,
տեղական լրագրիչների վերջին համարներում
հրատարակեց մի համակրական հրաւեր՝ Կին-
վում կանանց բարձրագոյն բժշկական կուրսեր
հիմնելու մասին: Այդ յայտարարութեան մէջ՝
ընկերութիւնը բացատրելով մանրամասնաբար
յիշեալ կուրսերի նպատակը և դրա անհրաժեշ-
տութիւնը Կինվի նշանադրում, որ ամբողջ հարա-
ւային Ռուսաստանի կենտրոնն է կազմում, դի-
մում է զիջաւորապէս հասարակութեան աջակ-
ցութեան՝ գործին օգնելու համար: Դեռ ևս
նուիրաբերութիւնն չէ եղած: Յուսալի է, որ տե-
ղական մի բանի հարուստներ, ինչպէս պոլի-
տեխնիկումներ, նոյնպէս և այս համակրելի գոր-
ծին կօչնեն իրանց նուիրաբերութիւններով:
Յայտարարութիւնից յետոյ, այստեղի կրեդիտա-
յին ընկերութիւնը անմիջապէս առանձին հաշիւ
բաց արեց նոյն նպատակով նուիրաբերութիւն-
ներ ընդունելու համար:

Հարց է՝ որպիսի նշանակութիւն կունենայ
մեզ, կովկասցիներն համար կանանց բժշկական
բարձրագոյն կուրսերի հիմնելը Կինվում: Մեր
կարծիքով, հեռու գնալ հարկաւոր չէ: Բաւական
է աչքի անցնել Պետերբուրգում անցեալ տարի
բացված կանանց բժշկական բարձրագոյն կուր-
սերում կովկասցի ուսանողուհիների թիւը և այն
ժամանակ փաստն ինքը ցոյց կը տայ, որ ինչ-
քան այդ կուրսերի Կինվում հիմնելը օգտակար
է: Մարդասիրայի համար, նոյնքան օգտակար է և
մեզ՝ կովկասցիներին համար, քանի որ Ռուսաս-
տանում այդպիսի կուրսեր դեռ նոր են հիմն-
վում: Եւ եթէ ի նկատի առնենք ընդհանրապէս
կիւման և կեանքի այն պայմանները, որոնք մեր
ուսանողութեան համար ներկայումս կատարեալ
գոյնիկան սուր է դարձել, մենք կը տեսնենք,

կարծես եթէ չը լինեն այդ «ընտրութիւնները»,
կը փութվին այն տիպի ինտելիգենտները, որոնք
НИ БОГУ СВѢДА, НИ ЧЕРТУ КОУБЕРТА...

Ուրեմն, պ. Գ. Վ., ի՞նչ է մնում ձեռք բանա-
լիցը, երբ մի կողմ շարունակ խնդրին չը վերա-
բերող մասերը, այն՝ որ դուք էլ մեզ հետ ընդու-
նում էք, որ կղերը դեռ ևս գործ օն է,
մի բան, որ մենք առանց «ուրախանալու» կամ
տրտմելու, ուզում է ինչը ապացուցանել, իբրեւ
սոսկ իրական փաստ: Բայց դուք աւելացնում
էք, թէ կղերը միայն բացասական գործ օն է,
ուրեմն չար ի բ: Մենք այդ չափազանցու-
թիւնը ենք համարում ճիշդ ձեռք սեփական սկզբ-
բունքի հիման վրա, մասնաւոր այնքան թմաւիտ,
անբան չէ, որ իր յօժար կամքով պահպանի բա-
ցարձակ չարիքը. ո՞վ է ստիպում ազատ շլէյցա-
բացում կամ եանքերին դեռ պահպանել եկեղե-
ցիները և չը բաւականաչափ դրամով դեռ
միասնաբար ինչ ուղարկել թուրքաց Հայաս-
տանի նման դժոխքը: Ուրեմն պէտք է երկա-
ղել, որ մի բան կայ կղերի մէջ, որ ամենաա-
զատ երկիրներում անգամ արգելում է միան-
գամայն ոչնչացնել նրան...

Բայց ընդունենք որ կղերը բացարձակ չարիք է.
ունէ՞ր դուք բոլոր եւրոպական ինտելիգենտիայի
միահամուռ ջանքերից աւելի մեծ կարողութիւն
արմատախիլ անելու այդ չարիքը. իսկ եթէ ոչ,
ինչ էք առաջարկում անել: Մենք արդէն տե-
նանք ձեռք բանալու նշանաբանը՝ «մի կողմ
նետել այդ չարիքը և այլ բաների մասին մտա-
ծել: Բայց զիցուք թէ ձեռք այդ առաջարկն էլ
ընդունենք ինտելիգենտիան (մասնաւոր տրամա-
դրութիւնը այս դէպքում ձեռք ձեռնառու չէ) և
հեռացաւ, թողնելով ժողովուրդը, նրա եկեղեցին
և դրա հետ կապված բոլոր հաստատութիւնները
անարժան կղերի լիակատար տրամադրութեան
տակ և ասպարէզը մնաց «տղէտներին», առա-
ջակներին ու դատարկագործներին... Ինչ էք
վստահում որ ստեղծելով մի նոր Արշակա-
ւան՝ ի մեծ ուրախութիւն հասարակութեան
տականքի: Ի՞նչ էք վստահում որ առաջա-
դրութեան համար՝ դէմ լինելով մեր նախորդ

որ Կինվը այդ յայտարարութիւններով աւելի դե-
րագրանելի է կովկասցիների համար:

Վ. Մանուկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս Կովկասեան Կառավարչապետ իշ-
խան Գօլցիկն ճանապարհ է ընկնելու Մոսկվա՝
հերկայ լինելու Ալեքսանդր II-ի արձանի բաց-
մանը:

Օգոստոսի 1-ին, առաւօտեան 3 ժամ և 24
րոպէին թիֆլիսում երկրաշարժ եղաւ, բա-
ւական սաստիկ ցնցումներով, հիւսիսից հարաւ
ուղղութեամբ: Երկրաշարժի հարուածները տեղի
են ունեցել և՛ Բօրժօմում, Կօլորում ու չրճակայ
մի քանի ուրիշ տեղերում:

Մեր թղթակիցը մեզ հեռագրում է օգոստոսի
1-ից Սիւրաբալաբեց. «Այս գիշեր, ժամը 3-ին,
սաստիկ երկրաշարժ եղաւ, երեք հարուած՝ ա-
րեւմտից-արեւելք: Ժողովուրդը զարթնելով՝ սար-
սափով փողոց վազեց: Նիւստիւնները վնասվե-
ցին: Զոհեր չը կան»:

Յուլիս ամսին Պարիզում գումարվեց «Հա-
ղորդութեան խորհրդի» կոնգրէսը, որին մաս-
նակցում էին բազմաթիւ կաթողիկէ եպիսկոպոս-
ներ թէ եւրօպայի և թէ այլ ազգերից: Կոնգրէ-
սի ճառախօսներից մէկն էր Ադանայի և Տար-
սուսի հայ-կաթողիկէ եպիսկոպոս՝ Թերզեան, որ
ինչպէս հաղորդում է «The Catholic Times» շա-
բաթաթերթը, իր ճառի նիւթ է դնում հայկա-
կան կոտորածները: Նա կենդանի կերպով նկա-
րագրեց թէ ինչպէս հայ մարտիրոս ժողովուրդը
եկեղեցիներում խմբված սպասում էր մահվան:
Թերզեան եպիսկոպոս՝ կոնգրէսի ուշադրութիւնը
հրաւիրեց Փորը-Սիւրայի վիճակի վրա և իր ճա-
ռի վերջում ցանկութիւն յայտնեց, որ ապագա-
յում կօնգրէսը գումարով Պօղոս առաքելի
ծնած քաղաքում՝ Տարսուսում:

ԳՈՆՁԱԿԻ գաւառի Բանանց գիւղից մեզ դը-
րում են. «Յուլիսի 29-ին, երեք բանանցիցի հա-
յեր իրանց դրաստներով սեն էին տանում Գան-
ձակի Բագմանլար կղզիված տեղով: Զանապարհի
կիսին պատահում են երեք թիւքը, որոնք պա-
հանդուս են այդ հայերից սեխ. վերջիններս չեն
կատարում նրանց պահանջը: Անուպատելի էր
հայերի այդ վարմունքը: Թուրքերն առաջին ան-
գամն էին լուսւմ հայ գիւղացու բերանից բացա-
սական պատասխան... Թուրքերը պահանջում
են նրանց արծաթեայ դօտիները՝ դարձեալ մերժ-

յօղում: Այս խօսքերին. «Եկեղեցին իբրեւ որոշ
կազմակերպութիւն դեռ ունի բաւական կեն-
սունակութիւն. այդ կազմակերպութիւնը ժողո-
ւրդի հետ գործ ունի, ուստի անտարբեր լինել
թէ ովքեր են այդ կազմակերպութեան անդամ-
ները՝ յայնցանք է ժողովրդի բարօրութեան տե-
սակետից: Մեզ համար չը պէտք է մի և նոյ-
նը լինի թէ ով է կաթողիկոս, պատրիարք, ա-
ռաջնորդ... և այլն, որովհետեւ այդ պաշտօ-
նեաներից կարող է ազդի համար և՛ չարիք և՛
բարիք առաջանալ. լուսաւորը, ազնիւը, գոր-
ծունեան և ձեռնասար անուպայման օգտակար են
ժողովրդի համար և ընդհակառակը՝ շատ տու-
ժել ենք և աւելի կը տուժենք տղէտ,
աւագակ, ծղլ և մորով ու կամով անդամա-
ւորը դարձած վեղարաւորները»:

Որը աւելի կը թեթեւանի ժողովրդի բեռը,
մեր թէ՛ ձեռք առաջարկը, որի իրադրոժումով
դուք նրա ոտերից կապում էք մի ապականված,
կարակիչ ախտ և յետոյ ասում. «Գէջ այժմ քա-
լէ, քալէ մարդկային առաջադիմութեան ճանա-
պարհի վրա»...

Ձեռք այդ արածը մեզ առաւապել է յիշեցնում
Մուլիէ էր, չէր ծնվել մի երկրում մի զարմանա-
լի երկրաբան. երկու եղբայրներ իրար մէջբերեց
կղած, այնպէս որ մէկը առանց միւսի համա-
ձայնութեան և աշակցութեան չէր կարողանում
ազատ շարժվել: Մի/թէ կարող է լինել ա-
ւելի վատ դրութիւն, քան այդ, մտածում էին
տեսնողները: Անցնում են տարիներ. երկու-
րեաներից մէկը (չը գիտենք ինչ քանա ազդե-
ցութեան տակ) մտածում է անպատճառ ա-
զատվել իր ընկերից և... մեռցնում է նրան:
Միայն այդ յայնցանքը կատարելուց յետոյ է նա
հասկանում, որ այժմ իր դրութիւնն աւելի ևս
անտանելի է: Գործնական նա ստիպված էր
այնուհետեւ իր մէջբեր վրա կրել մի նեխված
դիակ, որը թուաւորում է նրա կեանքը ա-
մեն օր, ամեն ժամ...:

Լուսն Սարգսեանց

վում է նրանց պահանջը: Երեք հայերն սկսում են փախչել դեպի Գանձակ պրիստոնին խնայ անկում: Թուրքերը, որպէս զի արգելին նրանց փախուստը, բարեր են գցում. քարերից մէկը զիպում է գիւղացիներին մէկի գլուխը պատուում, որից նա արհեստավար ընկնում է գետին: Երկուսը հանում են Գանձակ, խնայ են տալիս պրիստոնին, որը մի չափարով դալիս է և տեղն ու տեղը կազմում արձանագրութիւն: Հետաքրքիր է հետևանքը:

ԿԱՐՍԻՑ հաղորդում են «KABAZ» լրագրին. «Կարսի շրջանում ապրող զուլաթորները զիմել են Կովկասեան զինաւոր իշխանութեան, խնդրելով թող տալ իրանց զաղթելու արտասահման:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՌՈՎ ԷՖԵՐՍ

Հեռագիրը հաղորդեց, որ յուլիսի 27-ին Բալարիայում վախճանվեց յայտնի գիտնական և գրող Գէորգ Էֆերս: Գէորգ Մօրից Էֆերս ծնվեց 1837-ին մարտի 1-ին Բերլինում, ուրեմն վախճանվեց 61 տարեկան հասակում: Աւարտելով գիմնազիական ուսումնս այդ քաղաքում, նա մտաւ 1858-ին Գետտինգենի համալսարանը և յետոյ Բերլինի համալսարանը, ուր վերջնականապէս նուիրեց իրան արեւելագիտութեան և կրօնական հնութիւնների ուսման, ապա նա յառկապէս զբաղվեց հին եգիպտոսի պատմութեամբ և սովորեց նրա լեզուն: Այցելելով Եւրոպական միւլեօմներում գտնված եգիպտական հնութիւններին, նա դարձեց յետոյ ճանապարհորդեց Եգիպտոս, Նուբիա, Արաբիա: Զանազան հնութիւնների վերադառնալուց յետոյ Լէյպցիգի համալսարանը յանձնեց նրան եգիպտական լեզուի և հնութիւնների ամբիօնը: Այդ ճանապարհորդութեան ժամանակ բազմաթիւ գիտնական գիտերի թուում նա գտաւ յայն հռչակաւոր թղթական պապի րուսը, որ յայտնի է Էֆերսի Պապիական ամուսնով: 1876-ին նա կաթուածահար եղաւ, ուստի և ամբիօնից թողնել իր պրոֆէսորական և գիտնական գործունէութիւնը ու նուիրեց իրան բացառապէս պատմական րոմանների երկարամիտութեան: Նրա ամուսին հռչակով առաջին գլխաւոր բովանդակը—«Փարալանի աղբիւրն» է, որ լոյս տեսաւ 1864-ին. ապա հետագային հրատարակվեցին «Ուարդա», «Մարդեմ» (Homo sum), «Քրիստոս», «Կայսր», իսկ ամենավերջին վէպը, որի նիւթը առնված է յունա-եգիպտական-արեւմտահայերէան շրջանի կեանքից, «Արաինէա» վերնագրով, լոյս տեսաւ անցեալ տարւոյ վերջին և նրա թարգմանութիւնը դեռ մինչև այժմ էլ չարձանակվում է ուսուցանանքի համար: Թէև Էֆերս նշանաւոր է հանդիսացել և իր գիտնական գործերով, իբրև հնագիտ-եգիպտագէտ, բայց քաղաքակրթված աշխարհին և մեզ հայերիս, նա յայտնի է գլխաւորապէս իբրև վիպագործ: Նա իր վէպերի մէջ, չնորհիւ իր գեղարուեստական տաղանդի և գիտնական հետաքրքրեման, կարողացաւ վառ դրոշմերով և պատկերներով կենդանացնել հին եգիպտոսի կեանքը և դործիչներին: Այդ վէպերից երկուսը՝ «Փարալանի աղբիւրն» և «Մարդեմ» թարգմանված են հայերէն և լոյս են տեսել Հրատարակչական ընկերութեան հրատարակութեամբ:

ԵՌՈՊԱՑԻՆԵՐԻ ՊԱՆԱՆՁԸ

«Daily News» լրագիրը հաղորդում է, որ հայկական կոտորածների ժամանակ վնասված անդլիական հպատակները զիմելին իրանց դեպահանառանձ խնդրելով աւելի գործնական աջակցութիւն ցոյց տալ, որպէս զի իրանց պահանջները կատարվին: Ի միջի այլոց նրանք յիշատակում են որ կոտորածի պատճառով երկու անգլիացիներ հարկադրված էին դադարեցնել իրանց գործերը և անկարող են բաւարարութիւն տալ այն դրամական պահանջներին, որոնց դատարանով սկսված են նրանց դէմ Անգլիայում: Անհրաժեշտ է հարկադրել Բ. Դրան որ նա շուտ վարձատրէ վնասվածներին: Ինչպէս յայտնի է, նոյնաման պահանջներ անում են և Պրանսիան ու Իտալիան: Անան ինչ է դրում «Turquie» լրագիրը այդ առիթով. «Մեզ, իրոտովանում ենք, դարձանք ցնում է ոչ թէ օսմանեան կառավարութեան մերժողական պատասխանը, այլ այդ տեսակ պահանջներ ներկայացնելու փաստը: Միթէ որ և է կառավարութիւնը կարող է պատասխանատու լինել այն պատասխանութիւնների համար, որ առաջացնում է կոմսօպօլիտական յեղափոխութիւնը: Կառավարութիւնը պարտաւոր է վերականգնել խաղաղութիւնն ու կարգը: Նիթէ հրձիկութիւնից առաջացած մի հրդեհ հանդիսանալու:

Լու ժամանակ հրդեհաշէջները վնասներ պատճառեն մասնաւոր մարդկանց, ով կարող է որ և զօդուհովին յայտնել... Նիթէ իրանդացիները Լոնդոնում ապստամբութիւն յարուցանէին և այդ ապստամբութիւնը ճնշելու ժամանակ վնասվէին օտարահպատակները, հազիւ թէ օտար պետութիւնները թաղուհի-կայսրուհի Վիկտորիայից որ և է վարձատրութիւն պահանջէին: Թիւրքիայի վերաբերմամբ մոռանում են, որ նա ապառ է և չէ գտնվում Եւրոպայի ինքնակառավարութեան տակ: Նիթէ կամենան Թիւրքիայից պահանջել նրա կեանքը այն պատճառով, որ նա չէ ուղում ձեռքից տալ իր օջախը, դուցէ նա և կը մեռնի, բայց հոգեւորքէ մէջ էլ սարսափելի կը լինի իր թշնամիները համար: Այնուհետև լրագիրը թրքական ամբատութեամբ հատապարտում է, թէ հայկական անկարգութիւններ իսկական զրգիւններ էին խաղաղացիները և անդիպացիները: Այժմ այդ զրգիւն-ագնէտները թշուառ զոհեր են ձևանում և պահանջում են վարձատրութիւն իրանց կրած վնասների համար:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Բօստօն, յուլիսի 25-ին
Զօրավար Մայլ Փօթօմ-Րիքօ հասեր է: Այստեղ անձկութեամբ կրկնապահ լուրերուն: Դեռ որոշ չէ, թէ որտեղ ցամաք պիտի ելնէ կամ ելած է ամերիկեան բանակը: Զորս կողմէն նորանոր պոչերը դէպ Փօթօմ-Րիքօ կերթան, 30,000-էն մինչև 35,000 զինուոր պիտի մասնակցեն արշաւանքին, ասոնց դէմ դնելու համար սպանիացի կարևոր ուժեր չունին, Սան ժուանի ամբարձրութիւններն զատ:

Սանթ-Մագօյնի եկած լուրերը հետաքրքրական են. Սանթ-Մագօ նահանգը խաղաղութիւն կը հաստատուի, աւաններէ դէպ ի նահանգին մայրաքաղաքը կուգան սպանիական ջոկատներ աւերիկացի զորապետին անձնատուր լինելու. քաղաքը լեցուած է զինուորներով: Զինուորներէն զատ հաղարներով անթիվ մարդիկ կան, որոնց ամենը կը կերակրուին Միացեալ-Նահանգացի հաշուոյն: Օրական 100,000 հոգի կերակուր կը ստանան: Սպանիական ընկերութիւն մը սակարկեց 24,000 սպանիացի զինուորներ իրենց հայրենի նահանգներուն փոխադրել կէս միլիոն զօրավոր, բանակցութիւնը վերջացած է: Ամերիկացիք կը փախապնին, որքան կարելի է, շուտ ապստամբ այն հիւրերէն, սպանիացիք սակայն սկսեցին են նոր ճանաչող իրենց եանքի բաւականները: Սանթ-Մագօյնի մէջ, մասնաւոր մեծ եռանդով կողմնակի ամերիկեան զօրակցը, նախադասին կենացը կը խմեն և ամերիկացի գիտնականներու հետ թե թեկ տուած փողոցները կը շրջեն:

Դեղին տենդը սարսափ պատճառելէ դադրած է, այս պատճառաւ հասնական է, որ զօրապետ Շէֆֆրերի բանակը Բուպա մնայ: Այս մեծ յաղթանակ մ'է գլխաւորական բովիչներու համար: Առողջապահութեան խիստ միջոցներ կըրցան յաղթել սոսկալի հիւանդութիւնը, քանի որ է ի վեր նոր վարակուած մարդիկ չը կան, հիւներն ալ կը լաւանան: Ուրիշ առններ այդ համաճարակը Բուպային Միացեալ-Նահանգները փոխադրուած է և բաւական մեծ կեանքի կորուստ պատճառած է և կեանքի կորուստէ զատ անցեալ տարի միլիոններ կորուսին հարաւային նահանգները. քաղաքներ, գիւղեր ամայացան, բնակիչները գործ, դրամով թողլով այս դեղին մահուան առջին կը փախչէին: Այս տարի այդ քան հաղարներով գերինք փոխադրուեցան հոս, այնքան յարաբերութիւն կայ, սակայն ձեռք առնուած գլուխութեանց չնորհիւ մինչև հիմա ամերիկեան հարաւային նահանգներունները և ոչ մի դէպք պատահած է: Թէև այդպէս է լոնք թէ այս ապառնիութեան զլխաւոր պատճառներէն մին ալ Հաւանայի պաշարած լինեն է: Այդ քաղաքը Բուպայի ինչպէս նաև իր նշանաւոր համաճարակին ալ մայրաքաղաքն է: Պաշարուել թող չը տար միջբողոքներն զուրս գալ իրենց յաւանական բնակարանէն: Հաւանապոլսի կան, որ կրնան թէ երբ Սպանիոյ միջնադարեան բարբարոս կառավարութիւնը շնչուի կըզլեն, ամերիկեան ճարտարութիւնը և հարստութիւնը պիտի կրնան իսպառ ոչնչացնել նոր աշխարհի այս սարսափը. եթէ դոնէ այսքան ալ չը յաջողին, պիտի կրնան բաղդատաբար շատ անվնաս հիւանդութեան մը վերածել զայն:

Դեղին տենդէն զատ՝ պատերազմի վերջերէն տառապողներ շատ կան Բուպա: Այս դժբախտներուն օգնելու ջանք չը ինյայտուի, բնիկները, անհասնել հասնելով սառ, քանդարեղէն և այլն կը դրկեն: Երեւակայեցէ սառով լեցուն նա. մը այրեցեալ գօտու տաքութեան մէջ: Սանթները սակայն կը յաղթեն դժուարութեանց:

Իրենց վերաւորներն այնքան առատ սառ ունեն, որքան քանատաքիք: Նիւ-Յօրքի գիւղերէն մին բնակող աղջիկ մը չորս-հինգ շաբաթ առաջ վերաւոր զինուորներուն օգնելու վրա խորհելով՝ հարք մը կը մտածէ: Զորս բարեկամահիներու նամակ կը գրէ, խնդրելով, որ ամեն մէկը իբր նպաստ 10 սենթ զրկէ և չորս հատ բարեկամի ալ գրէ իր նամակին պէս նամակ մը: Հապիւ քանի մ'օր անցած, այդ գիւղին նամակատունը կը խոնարհի օրիորդի հասցէին եկած նամակներու դէպքը, օրիորդն անկարող այդ բոլոր նամակները բանալու, իր ընկերներու օգնութեան կը դիմէ, նամակատան պաշտօնեաները բաւական չեն այդ նամակներու կարգի դնելու և տեղը հասցնելու, նոր մարդիկ կը վարձուեն: Ասաւտէ մինչև երկու շաբաթ կաշխատեն հարեւրաւոր օրիորդները՝ այդ նամակներուն պատասխան գրելու և դրամին հաշիւը պահելու և ամեն երկու շաբաթ չափաւոր նամակներու դէպ կը մնայ: Օրիորդն ստիպուեցաւ լրագիրներու միջոցաւ խորհել, որ դադարեցնեն նպաստները, սակայն դեռ նամակներ կը տեղան: Դոյացած դրամով մինչև հիմա մէկ նաւ սառ զրկուած է Սանթ-Մագօ, ուրիշ պէտքի նիւթեր ալ կը պատարաստուի զրկելու վերաւոր զինուորներուն, որոնք անշուշտ չնորհակալութեամբ պիտի ընդունեն իրենց քայլերու զրկած այս նուէրները: Նիւ-Կեղեցիներն ու ըլնուներն ալ հանգստակութիւն սկսած են, շատ ազնիւ տիկիներ կամաւոր գլխաւոր Բոստօնի հայերն ալ 25 զօրաքի չափ հանդակեցին նոյն նպատակին համար: Կը տեսնէք, հայրենասիրութեան եռանդը մինչև մեզ հասեր է:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, յուլիսի 21-ին
Վերջապէս հասաւ հունձքի ժամանակը և ամբողջ Սալմաստի արտերում և դաշտերում լըսվում են հնձողների և կալ անողների ուրախ երգերն ու տաղերը: Հունձքը առատ է, ցորենի ու գարու գինիքը զգալի կերպով սկսան նուազել այս մի քանի օրը. դո՛ւ է ժողովուրդը, դուրս է մասնաւոր երկրագործը դառնալով:

Սալմաստի նոր յաջորդ հայր Գառնիս տառն օր է, որ ուղևորվել է Խոյ ընթացիկ գործերի կարգադրութեան համար. նա գնալու է նաև Խոյի բուն բնակավայրում հայերին վերստին մայրենի եկեղեցու գիրքի առաջնորդելու: Իսկ հայր Շաղոհան իր հետևորդներով ուղևորվեց Ուրմի ժողովրդեան վիճակը քննելու համար:

Ուրմիում կատարեալ անիշխանութիւնը տիրապետում է և մինչև այսօր 8—10 ասորաբնակ գիւղեր յարձակում են կողմ ճնշող տեղացի թուրքերից և ծերերից: Մեծ զորավաճ է տեղի ունեցել և բաւական թուով ասորիներ սպանված են:

Խոյում այս մի շաբաթ է, որ Պարսիկ ժողովուրդը ի վիճակ է արել, այսինքն գործադուլ և համալսմամբ հեռապրատանը, Հալեթ-Ջաղաթ-Խ-Մուլէին դէմ բողոքելու համար: Պահանջում են նրա անմիջական պաշտօնանկութիւնը՝ գործած հարստահարութիւնների և կաշառակերութիւնների պատճառով: Այլը ինչ անէ խեղճ մարդը: 7,000 թուական է վճարել կանխիկ դրամ՝ շաղաթ-Սալմ-Աքրամա՝ Ամիր Նիւամին այդ պաշտօնը ձեռք բերելու: Խոյի անցեալ օր բաւական ծանր կերպարանք տեսցաւ, երբ ամբողջ յարձակվեց ճնշել Հալեթի տան վրա և նրան քարկոծելով ստիպեց փախչել Եօրուհի—բանակը՝ զօրքի պաշտպանութեան տակ դնելու իր անձը: Այդ բանի վրա Թալիքից իսկոյն քննիչներ են ուղարկում գործը քննելու: Տեսնե՛ք վախճանը ուր կը յանդի:

Սալմաստում քիւրդերը դեռ շատ էլ հանդիսանալու պահում իրանց: Անցեալ շաբաթ երկու հայ երիտասարդներ զո՛ւ եղան նրանց գնտակներին: Մինը հաֆթվանցի դարբին Կեօրը, որ Զարայ գիւղում սպանվեց օրը ցերեկով և միւսը դեղեկի Աւալը, որ մի քան տղամարդ էր: Սրան սպանում են գլխով քիւրդեր ճնշել իր այդուհի, թրի հարուածների տակ: Ոչ ոք չէ ձերբակալված այդ մարդասպանութիւնների համար:

Սալմաստի նորընտիր Սարփարալ՝ «Իթլայի-դօվէ» է, Միւղա-Հիւսէյին-խան Մէրիֆէյը մօտերն պէտք է գալ իր պաշտօնատեղիին: Արդեն մի քանի օր է, որ նրա գործակալ Սիմօն-խան Տէր-Յարութիւնեանցը գնացել է Կիւման՝ հարկ եղած կարգադրութիւնն անելու: Այստեղ եկած է նաև Մատուր-խանի որդի Սամսօն-խանը թալիքից, «Միւղայի»—մարտաւան—ընդհանուր հակողի պաշտօնով: Պարսը մի համակրելի երկրատառք է և կը յուսացվի, որ պիտի ուսումնասիրել Սալմաստի կեանքի հետաքրքրական խորքերը:

Ղալասարի որբանոցի խնդիրը դեռ այնպէս մնում է չլուծված. զօգտօր Լէպիուս յանկանում է եղել նախորդ անուշ պատօր Բէրգմանին կրկին բաղմեցնելու որբանոցում, իսկ անօրէն պ. Պաղասարեանցը առարկում է, որ որբանոցի սաները հայազգի լինելով և ինքը նրանց մի առ մի հաւաքած բլլալով՝ չէ կարող նրանց մի օտար խնամքին յանձնել առանց նրանց համաձայնութեանը և աղգային վարչութեան գիտութեանը, որոնց առջև նա իրան պատասխանատու է ճանաչում: Զարմանալի է, արդարև, որ պատօր Բէրգման վայելում է Թալիքում ամերիկացի քաղաքացիների ոմանց և այլ օտար մարդկանց համակրութիւնը և այդ պատճառով նա յուլիսի 18-ին, որբանոցին վրա գործած ամօթալի յարձակումին համար մինչև այսօր էլ դեռ ոչ մի պատմի կամ յանդիմանութեան չէ ենթարկվել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլսից գրում են «НОВОСТ» լրագրին. «Հակա-ուսական արշաւանքը Անգլիայում սաստիկ երկիւղ մէջ է գցում սովորաբար Անգլիական ուսատեսացիները ամեն բան անում են, որպէս զի ուսուսներ երևան և այդ շատ անյարմար դրութեան մէջ է դնում Թիւրքիային: Ի դուր Բ. Դուռը աղաչում է անգլիական պարլամենտում եղող իր բարեկամներին չափաւորել իրանց յարձակումները, նրանք ոչ մի բան չեն կամենում լսել և իրանց սաստիկ յարձակումներով ու կրիտիկայով զրգուում են Սօյսբուրիին և յարուցանում են սովորաբար զօգնութիւնը, որը, այդ պատճառով, ստիպված է ձեռք քաշել իր այդ բարեկամներից: Սօյսբուրիին միանգամայն հանգստացնելու համար՝ Բ. Դուռը կարեւոր իր յարաբերութիւնները Թիւրքիայի գործը միշտ պաշտպանող անգլիական երեք քաղաքացիներին հետ: Այդ քաղաքացիներն են—ժողկալ Կոմմենդէյ, որը Այմէն Բարդէլու և Զիբիօն Բուլլու: Մի շաբաթ առաջ Բ. Դուռը հաղորդեց անգլիական արտաքին գործերի մինիստրութեան, որ նա իր վրա չէ առնում ո ու է պատասխանատուութիւն այդ պարտնների ճառերի մասին. վերջիններս, վրդովելով, անուանում են Բ. Դրան այդ յայտարարութիւնը անարժան ստորութիւն և սպանում են գնդարկեցիկ Թիւրքիայի հրապարակական պաշտպանութիւնը:

—Կ. Պօլսում կարծում են, որ Նիմէի պարստամութիւնը, որը վերջերս լուրջ կերպարանք է ստացել, Անգլիայի դրդման հետևանք է: Ապրտամբ արաբներից երկուսը կարողացան փախչել անգլիական պաշտպանութեան չորհուրէ և գնում են Լոնդօն. նրանք դատապարտված էին մահվան պատմի: Բ. Դուռը բողոքեց և պահանջեց իրան յանձնել այդ ապստամբներին, բայց Անգլիան մերժեց և գործն ուղարկեց թագաւորական պրօկուրօրին: Վերջինս յայտնեց, որ այդ արաբները պէտք է նկատվեն իբրև քաղաքական յանցաւորներ, ուրեմն և անկարելի է նրանց յանձնել Թիւրքիային:

—Սպանիայում կարլիստների շարժումն, ըստ երևոյթի, աճում է: Հաղորդում են, որ Իօն-Կարլոսի բոլոր կողմակիցները Հավարայի և Գուիպուսկոյի շրջանում արդէն աղանչան են ստացել և, ինչպէս կարծում են ամենքը, շուտով Իօն-Կարլոս կերայ սպանիական հողի վրա: Ապստամբութեան համար պատրաստված են 18 հազար հրացաններ և շատ ուղեւորներ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսի անգլիական դեսպանատան քարտուղար Բանդէն Բ. Դրան ուղարկութիւնը դարձրեց այն անգլիկութիւնների վրա, որ կատարեց ժամադրանքներ զլխաւոր Ալի-բէյ իր ստորադրվածներին հետ, երբ նրանք Բիթլիսի վիլայէթի հայ ազգաբնակչութեան մէջ յեղափոխականներ և դէշներ էին որոնում: Անհատաւոր բռնութիւններ են կատարված այդ խուզարկութիւնների ժամանակ: Միտուր Բանդէն խնայ տուեց, որ Բիթլիսի վայրի մահվան պատճառով պէտք է, որքան կարելի է, շուտ նշանակել ուրիշ վայր:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 1 օգոստոսի: Խաղաղութեան արձանագրութիւնն ստորագրվեց:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 2 օգոստոսի: Արտաքին գործերի մինիստր Դէյ հաղորդեց հետեւել քաղաքաւոր արձանագրութիւնից. 1) Սպանիան հրաժարվում է բաղձնապահ իրաւունքներից Կուրայի վրա. 2) Պորտուգալիան և սպանիական ուրիշ կողմերը Անտիլաներից, ինչպէս և Մարիանան կողմերը, յանձնվում են Միացեալ-Նահանգներին, վերջինս ընտրութեամբ այդ խուզարկութիւնների ժամանակ: Միտուր Բանդէն խնայ տուեց, որ Բիթլիսի վայրի մահվան պատճառով պէտք է, որքան կարելի է, շուտ նշանակել ուրիշ վայր:

